

4.3.2. Ներքին զբոսաշրջություն

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների և ուսումնասիրությունների արդյունքում ձևավորված փորձագիտական գնահատումների, 2007թ. հունվար-սեպտեմբերին հանրապետության տարածքում տեղաբաշխված կոլեկտիվ և անհատական զբոսաշրջիկների տեղավորման միջոցներում (կացարաններում) տեղավորվել են 311438 զբոսաշրջիկներ (33 ռեզիդենտներ), ինչը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 25.6%-ով:

Ներքին զբոսաշրջությունն ըստ նպատակի

(նաոր)

| | 2006թ. հունվար-սեպտեմբեր | 2007թ. հունվար-սեպտեմբեր | 2007թ. հունվար-սեպտեմբերը 2006 թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ, % |
|--|--------------------------|--------------------------|--|
| Ընդամենը զբոսաշրջիկներ ¹ | 247962 | 311438 | 125.6 |
| որոնցից ըստ նպատակի՝ | | | |
| գործնական | 83226 | 89741 | 107.8 |
| հանգստի և ժամանցի | 105340 | 149938 | 142.3 |
| բուժման | 39271 | 46368 | 118.1 |
| այլ | 20125 | 25391 | 126.2 |

¹ Տվյալներն արտացոլում են միայն հյուրանոցներում, հյուրանոցային հանգրվաններում, առողջարաններում, հանգստյան տներում հաշվառված զբոսաշրջիկներին: